

Փողերանոցին մէջէն հարկ էր զԱպտիւրրահման՝ որ Տիւզեանց մտերիմ բարեկամն էր, հեռացրնել, եւ տեղը Տիւզեանց ոխերիմներէն մին կանգնել: Այս ալ յաջողեցաւ:

1819 Օգոստոս 27 Տիւզեան ընտանեաց համար աղետալի օր մ'եղաւ. վասն զի այսպէս գաղտագողի լարուած որոգայթներն օր մ'իրենց ազդեցութիւնն զգալ պիտի տային. եւ այնպէս ալ եղաւ: Այս օրն յանկարծ Գրիգոր եւ Սերգիս փողերանոցը բանտարկուեցան, եւ 1819 Հոկտ. 2ին թագաւորին տանելու պատրուակաւ՝ զիրենք բանտէն հանեցին եւ հոն Պապը Հիւսթոնի դիմացը գլխատեցին: Նոյն օրը Գուրուհէշմէի ծովեզերեայ տունը եւ Նոր-գիւղի ամարանոցն պաշարեցին, եւ ժողովուրդն այս պաշարման պատճառն չիմացած՝ ամարանոցին պատուհանէն Միքայէլ (ծն. 1786 Յունուար 21) եւ հօրեղբօրորդին Մկրտիչ կախուեցան. իսկ Տիւզեանց մնացեալ բոլոր ազգականներն ի Գում-գափու Հայոց Պատրիարքարանը բանտարկուեցան. ինչք ուստացուածք յարքունիս գրաւեցան եւ կամ անարգ աճուրդի նետուեցան:

Բայց թշնամիք ասով ալ դո՛հ չեղան: Այս գէպքերու ժամանակ Յակոբ Չէլէպի Մորէա կը գտնուէր: Գաւաճանք զինքն ալ ի Պոլիս բերելու հրաման առին. բայց Գափուտան Ապտուլահ Փաշա՝ որ գիտէր Տիւզեանց անմեղութիւնն, զՅակոբ Չէլէպի, զկարապետ Պէյ եւ զՊօղոս Պէյ պահեց. եւ զիրենք արքայութեւ եւ անով մահուանէ ազատելու հրամանագիրն ընդունելով